ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Նվիրվում է Ավետիք Իսահակյանի 130-ամյակին

ԳՅՈՒՄՐԵՑՈՑ ՍՐՏԻ ԵՎ ՀՈԳՈՒ ՎԱՐՊԵՏԸ

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐՎԱ ՀԵՌՎԻՑ

Շատ տարիներ առաջ (1970-1976թթ.) «Գարունի» խմբագրություն էր գալիս մի ծերունի, ութսունն անց: Բարձրահասակ էր, նիհար, ուղիղ, հպարտ կեցվածքով: Ամառ թե ձմեռ զինվորական համազգեստով էր: Մի անգամ ես նրան հարցրի՝ ե՞րբ եք ծառայել և որտե՞ղ: Պատասխանեց՝ 1914 թվին, չորրորդ կամավորական գնդում:

Նա երկու պաշտամունք ուներ՝ Անդրանիկ զորավարը և հայ մշակույթը:

Երբ նրա հետ բավականին ծանոթացա, մի ակնարկ գրեցի «Զարմանալի մարդը» վերնագրով: Ակնարկը տպվեց 1975-ին, «Պիոներ» ամսագրում, իսկ հետո պատանիներին հասցեագրված իմ ժողովածուում («Նախնիների շառավիղը»,- Երևան, 1977թ.):

Իրոք, իմ հերոսը զարմանալի հատկությունների տեր անձնավորություն էր: Նախ՝ անունն Արտաշես էր, Արտաշես Պետրոսյան, բայց նրան բոլորը Ջումշուդ էին ասում: 1914 թվականին, քսան տարեկան հասակում, վրեժ էր լուծել մի քուրդ բեկից, որի վզին, ինչպես ինքն էր ասում, հայի արյուն շատ կար: Այդ պատճառով ընկերներն Արտաշեսին Ջումշուդ մականունն էին տվել՝ ի հիշատակ նրա քաջության:

Երկրորդ՝ ծեր հասակում (և ընդհանրապես) թոշակ չէր ստանում: Տասնամյակներ շարունակ գնացքով Կովկասի բոլոր քաղաքներից, գիշեր-ցերեկ բափառական կյանք վարելով, Գյումրի էր ներկրել ապրանքներ, որոնք անհրաժեշտ էին իր համաքաղաքացիներին: Կենսական անհրաժեշտ այդ ապրանքները նա հանձնել էր «բանկոռպկներին», «կոռպտորգներին», սակայն աշխատանքային գրանցում չէր ստացել:

Իր ծառայությունների դիմաց ստացած փողը ի՞նչ էր արել: Չզարմանաք: Կառուցել էր բանգարան և հավաքել ցուցանմուշներ՝ հնատիպ գրքեր, ամսագրեր, թերթեր, հայ զորավարների, ֆիդայիների, գրողների, կոմպոզիտորների, նկարիչների մասին նյութեր և լուսանկարներ, Գյումրիի պատմությանը վերաբերող զրույցներ, փաստաթղթեր, նկարներ...

Ջումշուդի երրորդ զարմանալի հատկությունը այս թանգարանին մինչև ուղեուծոը նվիրված լինելն էր: Երբ ես այցելեցի նրա թանգարան, մնացի ապշած. կառուցել էր մի մեծ սենյակ իր տանը կից, որն ուներ չորս սենյակի տարողություն: Ռելսերի վրա տեղադրել էր շարժական պատեր, որոնց ամրացված էին տարիների ընթացքում հավաքած իր հարստությունը՝ պատերին և մեծադիր ալբոմներում տասը հազա՛ր լուսանկար, զրադարակներում երկու հազար գիրք, թերթերի հա-

վաքածուներ, հին թղթադրամներ, գծանկարներ... Այցելուների տպավորություններ և նամակներ...

Արտաշես-Ջումշուդը մի մեծ վիշտ ուներ. ժամանակին հնարավորություն չէր ունեցել կրթություն ստանալու: Գուցե ա՞յդ էր պատճառը, սերը ուսման հանդեպ, որ նրան մղում էր անելու շատ զարմանալի մի աշխատանք. «Եթե ես լավ գիրք եմ կարդում, բայց չեմ կարողանում ունենալ իմ սեփականը, գիրքն արտագրում եմ: Ես արտագրել եմ 14 հատոր, բոլորն էլ հայ ժողովրդի պատմության վերաբերյալ...»:

Ընթերցող, իրավունք ունեի՞ իմ ակնարկը կոչել «Զարմանալի մարդը»: Երևի ունեի նաև նրա համար, որ երեսուն տարի առաջ նա ինձ ուղարկել էր մի ընդհանուր և հինգ աշակերտական տետրեր, որոնց շապիկներին խոշոր, հատհատ տառերով գրված էր՝ «Ավետիք Իսահակյանի և գյումրեցոց մասին»: Դրանք ես պահել էի իմ «Հատուկ թղթապանակում»՝ միշտ հիշելով, որ այնտեղ մի թանկագին պահուստ ունեմ, որն սպասում է իր ժամանակին, ինչպես ինքն էր գրել՝ 2000 թվից հետո սրանք պետք կգան:

Եվ ահա այժմ՝ մեծ բանաստեղծի ծննդյան 130-ամյակի առթիվ, այդ տետրերը հանել եմ և փորձում եմ դուրս բերել Գյումրի-ալեքսանդրապոլցիների պաշտամունքը իրենց քաղաքի հանճարեղ բանաստեղծ Ավոյի մասին:

Այս ամենին ուզում եմ ավելացնել, որ առաջին տետրի վրա գրել է. «Մեր շնորհակալության առթիվ Մարգո Ղուկասյանին»:

Նա ինձ շնորհակալություն էր հայտնում իմ ակնարկի և այն դիմումների համար, որ ես գրում էի վերադասին՝ արդարությունը վերականգնելու, գոնե ութսուն տարեկանում նրան թոշակ նշանակելու համար, ինչին, ցավոք, չհասա:

Ընթերցողի ուշադրությանն եմ հանձնում ընդամենը երկու տարի դպրոց հաճախած Արտաշես-Ջումշուդ Պետրոսյանի հուշերը, հիմնականում պահպանելով նրա լեզուն, ոճը և իր ժամանակին շատ օգտագործվող արտահայտությունները:

ԳՅՈՒՄՐԵՑՈՑ ՄՐՏԻ ԵՎ ՀՈԳՈՒ ՎԱՐՊԵՏԸ
ԿԱՄ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ ԳՅՈՒՄՐԵՑՈՑ ՍԱՍԻՆ

Ավետիք Իսահակյանը պատանեկան շրջանից մինչև ծերություն ջերմ կապված էր հայրենի հողուջրին, քարուքոին, Գյումրի-Ալեքսանդրապոլին: Մանավանդ Շիրակին, Շորագյալին, Արագած-Ալագյազին, Արփաչային ու Արաքսին, ինչպես և Անի քաղաքի ավերակներին:

Ավոն ման է էկե Արագածի ու Մանթաշի լանջերում, իր հայրենի Ղազարապատի դաշտ ու հանդերում, անցել սարեր ու ձորեր, թումբեր ու փոսեր, ցորենի ու գարու ծփան արտեր, սիրել է տավարի ու ոչխարի հոտեր:

Հենց էդ ժամանակներից Իսահակյանի հոգում բուն է դրել բանաստեղծության մուսան, որը տևել է մինչև իր կյանքի վերջը, իր մահը: Էդ մասին ասել ու խոսել են բնիկ Գյումրի-ալեքսանդրապոլցի մեծահասակ մարդիկ, որոնց հուշերը Ավոյի մասին օջախից օջախ, տնից տուն, բերնից բերան հասել է ներկայիս մի շարք կենդանի մարդկանց, բուն դրել նրանց մտքերում և հիշում են Ավոյին ոնց որ իրենց համաքաղաքացի:

Նրանցից քչերն են հիմի կենդանի, մնացողներն էլ 80-85 կամ 90-95 տարեկան են: Նրանք էլ շուտով գնալու են էն աշխարհը՝ իրենց հետ տանելով հարյուր տարվա պատմություններ: Այսօրվա օրը ես հարմար զգացի մի դավթարի մեջ գրել, թե Ավետիք Իսահակյանը ինչ կապեր է ունեցել Ալեքսանդրապոլի ժողովրդի հետ իր կենդանի օրերում:

ՄԵՐ ԱՉՔԻ ԼՈՒՅՍ ԱՎՈՆ

Մեր Ավոն, մեր Իսահակյանը, մեր Վարպետը, մեր գյումրեցին՝ մեր աչքի լույսն է: Այս բառերը գալիս են ասելու, որ դազարապատցի Ավետիք Իսահակյանի կյանքին ու գործունեությանը, մինչև նրա 30-35 տարեկանը, միայն կգիտենա գյումրեցի-ալեքսանդրապոլցին, իսկ մնացած տարիքը թողնում ենք մեր նոր գրչագիրներին և դեսից-դենից երազողներին:

Այս տողերը գրողս ծնվել եմ 1894թ. Ղարսում, հիմիկ ու հիմա 81 տարիք ունիմ շալակովս առած, որից 51-ը գցում եմ արխիվը, իսկ մնացած 30 տարին կարծես քիչ տարիք չէ Իսահակյանին ճանաչելու և գիտենալու համար: Մանավանդ, որ 1914 թվին, Ալեքսանդրապոլի «Շիրակ» տպարանում, որի տնօրենն էր Կարապետ Ափինյանը, հենց նրա աջակցությամբ և իմ ծախսով լույս տեսավ իմ փոքրիկ գրքույկը (75 էջ, 500 օրինակ)՝ վերնագիրը «Հայրենիքի սեր», Արտաշես անունով: «Շիրակ» տպարանում լույս

էր տեսնում «Ախուրյան» թերթը և «Շիրակ» օրացույցը: Ուրեմն կարող ենք ասել, որ շատ ու քիչ ծանոթ կլինեի հայ գիր ու գրականության և նույնպես մոտ ծանոթ էի էն ժամանակվա բանաստեղծական գոհարներին. Միքայել Նալբանդյանի «Ազատն Աստված», Գամառ Քաթիպայի «Մայր Արաքսի ափերով», Շահազիզի «Երազը», Ծատուրյանի «Հե՜յ նավավար», Պետրոս Դուրյանի «Տրտունջք»-ը ու «Լճակ»-ը և նույնպես Իսահակյանի մի շարք երգերը՝ «Մև-մութ ամպեր», «Մանկալ», «Ալագյազ», «Ա՜խ, մեր սիրտը լի-քը դարդ, ցավ», «Որսկան ախպեր», «Բինգյոլ» և այլն:

Սրանով գուզենք ասել, որ Ավետիք Իսահակյանի երգերը հայ ժողովրդի սիրած երգերն են, մանավանդ գյումրեցոց ու դարսեցոց:

ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՐՏԱՔԻՆԸ

Ավետիք Իսահակյանը արտաքինով՝ բոյը, թիկունքը, կուրծքը՝ թե ջահել օրերում և թե ծերության, հաղթանդամ կազմվածքի տեր մարդ էր, որ շատերը չունեին: Նրա լայն կուրծք ու թիկունքը և հաստլիկ, ուժեղ բազուկներն ու մատները վաղ տարիքում ոչ թե գրչի էին սովոր, այլ գյուղական ամեն աշխատանքներ ունեին կատարած. մաճ բռնել, գերանդի քաշել, ճիով գիշեր ու ցերեկ քաղաք ու գյուղ թափառել... Իսկ ինչ վերաբերում է ներքին տեսակետով, ծանր էր ու խոհուն, մտածող, խոսքը դժվար էր դուրս գալիս բերանից: Խոսելիս աչքի չափով կշռում էր դիմացինին: Նրա երեսին ծիծաղն ու ժպիտը նույնպես չափավոր էին: Դիմացինը երկրորդ անգամ էլ հարց չէր տա: Եթե տար էլ՝ պատասխան չէր ստանա: Քայլվածքը, համապատասխան մարմնի ծանրությանը, շտապելու կարիք չէր զգում: Այս ամենը ասում են, որ Իսահակյանի կազմվածքը շատ քչերն են ունեցել, որի լույսն ու ճրագը, փայլն ու ցոլքը նա բոլորից թաքուն էր պահում: Մինչև անգամ նրա գրած երգ ու մրմունջները, թուղթ ու մատիտը ժամանակավոր լռում էին, մինչև որ նա հասկացավ ու որոշեց, որ կյանքի, սրտի ու սերի հետ կռվել չի լինի:

ԱՎՈՅԻ ՍԵՐԵՐԸ

Իսահակյանի սիրտը մի հնոց էր դառել: Արյունը և սերը իրարու չէին հնազանդվում, մանավանդ երիտասարդության օրերում:

Հառիճի վանքի դպրոցում սովորելիս նա սիրեց տեղացի մի գեղեցկուհու և երգեց Ալագյազի փեշերին, և գուցե դա էր պատճառը, որ երգեր հնարեց մառմառ Զարոյի համար: Եվ նույնպես սիրեց ալեքսանդրապոլցի Մատակյանների աղջկան, Շուշիկին, որը դառել էր նրա սիրո դիցուհին:

Բացի դրանցից, գուցեև սիրել է ուրիշներին, շատ շատերին, բայց նա իր կոչումը չմոռացավ, սիրո զոհ չգնաց... Նա սիրո դեմ մնաց անդրդվելի, ոնց որ մի անտաշ ժայռի կտոր:

«ԵՐԳԵՐ ՈՒ ՎԵՐՔԵՐ»-ԻՑ ՀԵՏՈ

Գրքի լույս տեսնելուց մի քանի օր հետո մեր Ալեքսանդրապոլ քաղաքի հարուստներից մինը, Մ. Աղեն, փողոցում պատահելիս շատ վիրավորված տոնով սկսում է խոսել Ավոյի հետ.

– Ծո, Ավո՛, էդ քո գրված ո՞ր սրվածն ու չփլախն է բեռով հաց տվել մեզ, կերակրել: Չէ՞ որ դուն էլ հարուստի տղա ես: Էդ ու՞մ համար ես գրել: Դու մեղավոր չես, ռուսական ցենզուրն է մեղավոր, որ աչքաթող է արել:

– Հորեղբա՛յր,– ասում է Ավոն,– դուն ինձնից լավ գիտես, եթե սոխ չես կերել, սիրտդ ինչի կմռմռա:

Ուրեմն ձեզ հասկանալի եղա՞վ, որ մեր քաղաքի մի շարք հարուստներին ոչ Իսահակյանը դուր եկավ, ոչ էլ նրա «Երգեր ու վերքեր» գիրքը: Իսկ ինչ վերաբերում է քաղաքիս միջակ ու արհեստավոր, ռանչպար ու մշակ, բանվոր մարդկանց՝ Իսահակյանն ու նրա գիրքը ամեն մի հայաբնակ տեղում մուտք գործեց, ոնց որ էդ ժամանակներում հայ ժողովրդի մեջ տարածված էր Ռաֆֆու «Կայծեր», «Սամվել», «Դավիթ Բեկ» գրքերը և դժվարությամբ էին ձեռք ընկնում, որովհետև ցարական ոստիկանները արթուն աչքերով հսկում էին հայ գրքի ու գրականության վերայ ոնց որ որսորդի շներ:

Իսկ Իսահակյանի «Երգերն ու վերքերը» նույնիսկ փոքրիկ տղաները բերանացի արած թեկուզ տանը կամ դրսում երգելով՝ ման էին գալիս:

ԴԱՍ ՂԱՐՍԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Ես ծնվել եմ Ղարսում, 1894 թվին:

Լավ եմ հիշում, Ղարսի ծխական հայոց դպրոցում, մեր հայերենի դասատուն, Նորհատյան Համազասպը, մի ժամից ավելի կարդաց ու պատմեց Իսահակյանի և նրա գրքի մասին: Վերջում նա ասաց.

– Իսահակյանը Շիրակի հարազատ զավակն է իր երգով ու վերքով, իր մրմունջ ու մեղեդիներով:

Ես կարող եմ ասել, որ ինքս շատ տեղերում ականատես եմ եղել՝ Ալեքսանդրապոլում ու Ղարսում, հարսանիքներում, խնջույք-քեֆերում մարդիկ նվագողներին պատվեր էին տալիս «Ալագյազ», «Յարս տարան», «Սաճկալ», «Ա՜խ, մեր սիրտը», «Որսկան ախպեր» ու սրանց նման շատ երգեր, որոնց թե խոսքերը և թե մեղեդիները հայ ժողովրդի սրտից բխած հարազատ շունչ ու հոգի ունեին, որոնց արգելք չէր կարող հանդիսանալ ոչ

մի ցարական ոստիկան, որովհետև նա չէր հասկանում երգի գաղտնիքը՝ Արագածի սևմութ ամպերը ավելի խորն էին ծակում հայ հայրենասերի սիրտն ու հոգին, քան թե՝

Դաշնակցական խումբ, գնանք մենք Սասուն,
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում...

ԶՐՈՒՅՑԻ ՊԱՏԱՌԻԿ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԻՋԵՎ

1903 թվին ճարտարապետ Թորոս Թորամանյանը մասնակցում էր Անի քաղաքի պեղումներին: Ղազարապատից Անի 25 վերստ ճամփա էր: Մի օր Թորամանյանը ասավ.

– Ավո՛, էս դիմացդ երևացող վանքը կտեսնի՞ս, Հովվի եկեղեցին է: Կարելի է ասել գիտության տեսակետից առաջին տեղն է բռնում: Ափսոս, քանդվում է, վերանորոգման կարիք ունի, մենք էլ միջոց չունենք:

– Ճարտարապե՛տ,– հարցրեց Ավոն,– մի քանի օր կդիմանա՞:

– Հեր օրհնած,– ծիծաղելով ասաց Թորամանյանը,– ոչ թե օրերով, այլ տարիով էլ կդիմանա: Հեչ չլինի; կռնակս դեմ կտամ, կկանգնեմ:

Եվ մի քանի օրում Իսահակյանը, ալեքսանդրապոլցի Նիկողոս Կարապետյանը և Վաղարշակ Ստեփանյանը հավաքում են հազար ռուբլի և հանձնում Թորամանյանին, Հովվի եկեղեցու համար:

ԺԱՄԱՆԱԿԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Իսահակյանի «Երգերն ու վերքերը» բացի մեր քաղաքից մեծ ցնցում առաջ բերեց ամբողջ հայ գրականության և հայ գրողների շրջանում: Պետք է խոստովանել, որ էդ ժամանակներում հայոց գրականության ու հայ գրչագիրների կենտրոնը Թիֆլիսն էր: Ռուս ցարական ճնշումն ու ցենզուրը նեղում էին, մանավանդ, երբ տեսնում էին երկու հատ մեծատառ Հ. Հ.: Ահա այդ ժամանակ ռուս ցենզուրին և ոստիկանին հայտնի էր լինում, որ այդ տառերից մինը հայ է կոչվում, մյուսը՝ Հայաստան: Բայց հայ գրողը, հայ խմբագիրը կանգ չեն առնում, տպարանները փոխելով կամ մի որևէ խորամանկությամբ առաջ էին գնում: Ալեքսանդրապոլն էլ պակաս հսկողության տակ չէր: Ուներ «Շիրակ» տպարանը, թեև Իսահակյանի «Երգերն ու վերքեր»-ը լույս տեսավ Սանոյանների տպարանում, 1897 թվին:

Իսահակյան Ավետիքը մեր քաղաքի հարգված մարդն էր: Մանավանդ հպարտություն, գոռոզություն չուներ, բոլորի հետ հաշտ ու բարիշ էր:

Բացի այդ էլ, կարծես նա որոշած ուներ ու համոզված էր, որ արհեստավոր մարդկանցից ավելի շատ բան կլսեր ու կսովորեր, քան ուսուցիչներից:

Էդ ժամանակներում շատերը հայ գրքերից խուսափում էին: Եվ կային այնպիսիները, որոնք իրենց տներում ռուս կին կամ նեմկա էին պահում, որ երեխեքն օտար լեզուներ սովորեն: Ես ձեզ հավատացնում եմ, որ հայ գրողների գրքերից շատ քիչ գրքեր են մտել այդպիսի օջախներ: Հայ հարուստները գիտեին, որ ռուսաց պետությունը մինչև անգամ մեծատառ Հ-ն արգելած էր: Իսկ շատերի շկաֆներում գերմաներեն, ֆրանսերեն գրքերն ու ամսագրերը լիքն էին, թեև իրենք չէին կարող կարդալ, բայց քանի որ արգելող չկար, ձևի համար հավաքում էին:

Մեր քաղաքի անունն էլ ժամանակի հետ փոխվել է: Մի անգամ Վարդան աղբորը հարցրի.

– Կրսեն մեր քաղաքը հինգ անուն է ունեցել, տեսնես որո՞նք է:

– Ծո՛, սուտ բանն էլ խոսվի՞: Համա որ դուզը ըսենք, էս քաղքին տասը անունն էլ քիչ է:

– Ինչո՞ւ, Վարդան աղբեր, քաղաք կա, որ մեկ անունով դարեր է մաշե: Ահա քեզի Երևանը:

– Էհ, դեռ ջահել ես, հենց մեր քաղքի գաղտնիքն էլ դրանում է, որ հինգ անուն ունի: Լավ է ըսել Պոլոզը. «Մեր քաղքի վրա բմբուլ գցող չեղնի»: Բայց իմացիր, եթե ասեմ տասը պետություն եմ տեսել, գուցե չհավատաս: Հենց էդ պետություններն էլ, ում գլխին ինչ փչեց, մեր քաղքին անուն դրին: Գիտե՞ս պատճառը ինչն էր՝ մեր քաղաքը տեր չուներ: Անտեր-անտիրական, ում խելքին ինչ փչեր...

Էս որ գրեցինք, ոչ թե քննադատություն է, այլ մեր գլխով անցած ժամանակի իրողություն:

ԳՅՈՒՄՐՎԱ ՂԱՐԱՉՈՒԽԱԼԻ ՏՂԵՔԸ ԵՎ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ

Մի առավոտ, Գյումրվա ղարաչուխալի (սև չուխայավոր) տղեքը Բոբոլ Սերգոյի միկիտանում, հավաքված դախլի (վաճառասեղանի) առաջը թաք շահնոց արաղ էին խմում: Պոլոզը, Ծիտրո Ալեքը, Մեծբերան Նապոն, Գևիկը, Ղըլտըր Ակոն, Նալբն Կարոն, տոռան Մարտոյենց Բագրատը, Տուտիկ Օնեսը, խմում էին ու զրուցում, մեկ էլ Պոլոզ Մուկուչը տեսնում է, որ Վարպետը անցնում է:

– Ծո՛, ծո՛,– ասում է,– մեկնումեկդ գնացեք, ասեք՝ տղեքը կանչում են:

Վարպետ բառն արդեն ողջ Գյումրին գիտեր, ու բոլորն էլ Իսահակյանին Վարպետ էին անվանում: Եվ այդ Վարպետ անունն էլ Գյումրի-Ալեքսանդրապոլի արհեստավորներից է դուրս եկել, և դրա մասին մենք դեռ կխոսինք առանձին: Ո՛չ մի Երևան, ո՛չ մի գրականություն, ո՛չ մի վարժա-

պետ, ո՛չ մի տիրացու չեն կարող պնդել Վարպետ անվան մասին: Էդ մեր գիտենալիք բանն է:

Քիչ անց, Ավոն՝ Իսահակյանը, իր ծանր քայլվածքով, ձեռացափայտը բռնած, կիսաժպիտ, որ միշտ թաքցնում էր մարդկանցից, բայց ուրախ սրտով, ներս մտավ, լուռ չորս կողմը նայելով, ասաց.

– Տղե՛ք ջան, էս ի՞նչ լավ բան եք սարքել, բայց շուտ չե՞ք սկսել:

– Շուտ չէ, Վարպե՛տ ջան,– ասավ Մուկուչը,– ըիկվա խերից առավոտվա շառը ավելի օգտավետ է:

Ծիտրո Ալեքն էլ էն կողմից վրա բերեց.

– Ըբը ի՞նչ էնենք, Վարպե՛տ ջան, մենք որ չխմենք, Իսակովենց արաղը հո աշտարակցին խմելու չէ՞:

Մուկուչն ու Ծիտրոն Վարպետին մեջ առան ու լի շահնոց արաղը դրվեց դախլին: Եվ ամեն մեկը կարծես լեզու առած հերթով խմեցին Վարպետի կենացը, ճառելով ու գովաբանելով, ինչ որ գիտեին գյումրեցոց ղայդեն (ձևը, կերպը):

Երբ բոլորը խմեցին, Իսահակյանը տեսավ, որ մենակ իր բաժակն է լիքը, ասաց.

– Տղե՛ք, կարծես հերթը իմն է:

– Հա՛, Վարպե՛տ ջան,– ասավ Մուկուչը, ու բոլորը մի մարդու պես հայացքները դեպի Ավոյի կողմը դարձրին:

– Տղե՛ք, ես ձեզ բոլորիդ էլ լավ եմ ճանաչում ու շատ անգամ էլ բաժակ եմ վերցրել, գիտեմ ձեր հունքուբունքը, հորն ու մորը, գիտեմ ձեր օջախը, դուք բոլորդ մեծի թե փոքրի հանդեպ հարգանք-պատվով մարդիկ եք, բայց նկատել եմ, որ ունևոր մարդկանցից հետու եք մնում: Նրանց մեջ լավ մարդիկ շատ կան: Օրինակ, Բրուտյան Արամը, Մանուկով Ավոն, Ղաֆայով Կոստին, Էյրամջոնց Արտավազդը, Քյանդարովենց Սահակը...

– Վարպե՛տ ջան, շատ ներողություն,– ասաց Մեծբերան Նապոն,– նրանք ուսում են առել, աֆիցեր են դառել, էլ իրարու սազ չենք գա:

– Չէ՛, Նապո՛ ջան, գյումրեցու աֆիցերն ու միկիտանը, գյումրեցու վարպետն ու արհեստավորը մի հենքի գործվածք են, բոլորի սրտերն էլ բաց են,– պատասխանեց Իսահակյանը:– Չե՞ս հիշում մեր քաղաքացի Մանուկով Վաղարշակին, որ մասնակցել էր ճապոնական կռվին, շատ փող էր բերել, էդ բոլորը արհեստավոր մարդկանց հետ կերավ ու խմեց: Ամեն օր Սնդոենց Արամը նրա տանն էր նվագում: Սրանով կուզեմ ասել, որ մեր ժողովուրդը թեև քիչըմ մեծբերան ու լոպազ, բայց՝ ձեռնբաց է... Հա, տղերք ջան, բողազս չորացավ, կուզեմ խոսքս վերջացնեմ, հարցնելով՝ ձեզնից ոչ մեկը դպրոցի դուռ չի բացել, վարժապետի երես չի տեսել, գիրք չի կարդացել, գրի սևն ու սպիտակը չի ճանաչել, էս լավ խոսքերն ու ճառերը, համով-հոտով, անուշ զրույցները որտեղի՞ց եք սովորել:

Ներկաները լռեցան, ու բոլորը նայեցին իրենց մեծ ընկերոջը, Մուկուչին: Մուկուչը կանգնած տեղից քիչ առաջ եկավ, իր երկար և ուժեղ ձեռքը մեկնեց, թափով մի քանի անգամ զարկեց դախլին, ասելով.

– Էդ բոլորը էս դախլի առաջն ենք սովորել, էս դախլի առաջը, Վարպետ ջան, ու եթե էլի ապրենք, դեռ նոր բաներ ենք սովորելու:

Վարպետը սրտանց ծիծաղեց, իսկ մյուսները զոհ մնացին, որ Մուկուչն իր ընկերներին ամոթով չթողեց:

Վերջում Վարպետը դարձավ Մուկուչին՝ ասելով.

– Սուր միտք ունես, բայց ափսոս, որ անգրագետ ես, քաղքի տղա:

(Այս զրույցից հետո ընդհանուր տետրի հաջորդ էջում Արտաշես Պետրոսյանը մի տող է գրել իբրև վերնագիր և չի շարունակել. «Պոլոզ Մուկուչի շիրմաքարը, որ գցել է տվել Իսահակյանը»):

«ՈՐՍԿԱՆ ԱԽՊԵՐ» ԵՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մի կիրակի օր, Իսահակյանը, Ղասապենց Համայակը, Կարճիկյան Օնեսը՝ Թամբալ Լոքին, Դուրգարյան Գրիգորը՝ Ուսուլը, Յաղուբենց Օնեսի տանը ուտել-խմելուց հետո վար են իջնում և Բեքուդովսկի փողոցով գնում դեպի քաղաքի կենտրոն:

Հին ժամանակները, ըստ սովորության, երեկոյան դեմ հարեան կանայք պատի տակ փափուկ մինդարների, տաբուրետկաների կամ քարի վրա նստած որը գուլպա էր գործում, որը թել մանում և հետն էլ անուշ զրուցում: Պետք է ասել, որ մեծի հարգն ու պատիվը այնքան խոր արմատներ ուներ Գյումրվա կին ու աղջիկների մեջ, որ նրանց ծիծաղը, խոսք ու զրույցը իր չափն ու սահմանն ունեին: Հենց որ փողոցով տարիքավոր մարդիկ էին անցնում, խոսք ու զրույցն ընդհատում էին ու միասին ոտքի կանգնում ի պատիվ՝ մինչև նրանց անցնելը: Էդ օրը սրանք նկատում են, որ հեռվից տղամարդիկ են գալիս: Երբ նրանք մոտենում են, ոտքի են ելնում: Մի տարեց կին, որը դժվարանում է և քիչ էլ աչքերից խեղճ է, հարցնում է.

– Էդ ովքե՞ր էին անցնողները, որ ոտքի ելաք:

Մի կին, որ Իսահակյանին լավ գիտեր, մի քանի անգամ իրենց տուն հրավիրված էր եղել, ասաց.

– Շողի՛նկ մայրիկ, գրող էր:

– Ամոթ չէ՞, որ այդպիսի պատվավոր մարդկանց գրողի ես տալիս, – բարկանում է պառավը:

– Մայրի՛նկ, հո չե՞մ անիծում կամ Գաբրիելի գրողին տալիս, բանաստեղծ է, գիրք գրող, երգեր հնարող Իսահակյանն է իր ընկերների հետ:

– Հա՜,– ասում է պառավը,– ըշտը ըսա մեր Ավոն է, մեր ղազարապատցին, ես էլ էդ գյուղի աղջիկ եմ,– ասաց պառավը ու թաշկինակը տարավ աչքերին:

– Շողի՛կ մայրիկ, ինչո՞ւ կուլաս,– հարցրին:

– Աղբորս տղեն, Պադվալի Վաղոս միտքս ընկավ, որ Թումանյանի խմբի հետ գնաց Տաճկաստան:

– Ի՞նչ եղավ, չեկա՞վ,– հարցուց մի ուրիշ կին:

– Նրա գնալը էսպես եղավ. Վաղոս ուներ գինու պադվալ, և դրա համար էլ բոլորը Պադվալի Վաղո էին ասում: Հայ հեղափոխության օրերին նրա պադվալում ռուսական ոստիկաններից թաքուն բաներ էին կատարվում: Մեր քաղաքի տղեքը ցուցակագրվում էին ու գնում Տաճկաստան՝ թուրք ու քրդի ձեռքից հայերուն ազատելու: Օրերից մի օր մի ծերունի է գալիս, երկու բաժակ խմելուց հետո հենց Վաղոյի երեսին ասում է.

– Վաղո՛ ջան, տղոցը բոլորին ղրկեցիր, իմ միանուճար տղես էլ գնաց ու չեկավ, իսկ դու էլի քո պադվալում ես:

Վաղոն լսում է, ձայն չի հանում՝ ոչ հա, ոչ՝ չէ: Մյուս օրը պադվալը հանձնում է մի ծանոթ մարդու ու Թումանովի խմբի հետ գնում: Էդ գնալն էր, էլ հետ չեկավ, զոհվեց Տաճկահայաստանի հողի վրա, արյունը թափեց ի սեր հայության: Ավոն մեզ շատ մոտիկ էր, գնալ գալ ուներ, մանավանդ Վաղոյիս հետ: Հենց ի պատիվ Վաղոյի հիշատակին էլ գրեց «Ղրսկան ախպեր»* երգը: Եվ չկա Գյումրու մեջ մի հարսանիք, ուրախություն կամ մահ, որ «Ղրսկան ախպեր»-ը չերգվի:

Պառավը շարունակեց.– Հասակս թեև յոթանասունհինգ է, բայց այդ երգի մի տունը տպվել է սրտիս մեջ:

– Մե՛ծ մայրիկ,– ասավ մի ուրիշը,– մենակ ժամանակ ես էլ ինձուինձ դունդունում եմ էդ երգը: Էդ ո՞ր տունն է, որ քեզ շատ է դուր եկել:

– Կասեմ, ինչո՞ւ չէ, բալա եմ կորցրել՝

Տեսա մայրիկ, դարդոտ բալիդ
Քար էր դրրեր բարձի տեղ.
Անուշ քնով տաք գնդակն է
*Կրծքին սեղմել յարի տեղ*** ...

– Շողի՛կ մայրիկ, «Ղրսկան ախպերը» ծերից ծեր բոլորս անգիր գիտենք, ի՞նչ կեղնի Գոքորի՝ Շերամի խոսքերից մի երկուսը ասես:

---

* Արտաշես (Զումշուդ) Պետրոսյանն ինձ ուղարկած տետրերի մեջ «Ղրսկան ախպեր» երգի ստեղծման և Վարպետ մականվան վերաբերյալ երկու-երեք տարբերակ է գրել, որոնք հիմքով նույնն են, բայց երբեմն որոշ մանրամասներ ավելացված կամ պակասեցված են: Ես դրանք ի մի եմ բերել:

** Բնագրից շեղումը երգողի կողմից է:

– Է՜, աղջիկներ, իմ ասելու վախտը անցել է, համա Վաղոյիս վրա Շերամի կապած երգից մի քանի տող կասեմ.

Թումանովի խմբի զինվոր
Եղեմական վեհ հոգին,
Վաղոն ընկավ ու նվիրեց
Անուշ կյանքը հայ ազգին:

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԱՓՈՅԵՆՑ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՎԵՃԸ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ

Գյումրվա աչքի ընկած հարուստներն էին Չիթողցոնք, Դրմբյանը, Խալաթովը, Սեյլանովը, Ղարիբջանյանը, Խոյեցենք, Յուզբաշոնք, Տեր-Մարտիրոսենք, Ղունկի աղեն, Ղոջենք, Տեր-Դավիդովենք, Ղոլտուխչոնք և ուրիշներ, որոնց սիրտն ու միտքը փողն էր: Նրանք ժամանակին եղել են «պեռվի գիլդի» վաճառականներ, ունեցել են առևտրական տներ և «օպտովի սկլադներ»:

Էդ օրը Իսահակյանը իր սովորական զբոսանքի ժամին Ալեքսանդրովսկի փողոցով անցնելիս, հասավ Ափոյենց Մարտիրոս աղի վաճառատանը, որի դռանը կանգնած էր նրա տերը, Մարտիրոս աղեն: Նա կարծես հենց նրան էլ սպասելիս լիներ, հրավիրեց իր գրասենյակը ու մի քանի րոպեից հետո սեղանին դրվեց երկու ֆինջան սև սուրճ: Մարտիրոսը գանձարկղի մոտ նստած երիտասարդին ցույց տալով, ասաց.

– Սա իմ մեծ որդին է, սովորում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, արձակուրդ է եկել, լավ չե՞մ արել, որ մեր առևտրական գործերին եմ ծանոթացնում: Սա էլ քիչ ուսում չէ:

Իսահակյանը ոչ լավ ասաց, ոչ վատ, միայն տղայի հետ բարեկամական հայացքներ փոխանակեցին:

Վաճառականը ծխախոտին էր զոռ տալիս՝ Իսահակյանից մի դրական խոսք լսելու, բայց նա լուռ էր: Քիչ հետո ասաց.

– Քեզ քաղաքի վաճառականներից հեռու ես պահում, դուք էլ եք հարուստ, գյուղում ունևոր տնտեսության տեր, ձերոնք քաղաքում օղու գործարան ունեն, որ քիչ օգտավետ չէ: Ի՞նչ ես գտել էդ չվլաղ արհեստավորներու մեջ:

Իսահակյանը իր թավ հոնքերը կիտեց, որ բարկության նշան էր, ասաց.

– Փողատեր մարդկանց համար ոչ մի սրբություն չկա: Նրանց սրբությունը փողն է: Իսկ ձեր ասած չփլախները իրենց հալալ աշխատանքի տերն են:

Աղեն, որ չէր սպասում, թե Իսահակյանը իր աղա երեսնիվարը կշպրտե փողասիրությունը, մինչև ականջները կարմրեց, իսկ տղան, երևի խոսքը փոխելու համար, ասաց.

– Պարոն Իսահակյան, Թիֆլիսում* լույս տեսած ձեր «Երգեր ու վերքեր» գիրքը ինձ չհաջողվեց գնել, մեր ուսանողները ձեռքից ձեռք էին խլում:

– Երիտասա՛րդ, էդ գրքից ես մի օրինակ կնվիրեմ քեզ:

Երիտասարդը խնդրեց, որ բանաստեղծն իր ձեռքով մակագրի, քանի որ դա իր համար շատ արժեքավոր կլինի: Իսկ վաճառականի սրտում եռում էր նախանձը և չկարողացավ իրեն զսպել, ասաց.

– Ծո՛, ես էլ գիտեմ Թիֆլիսում դու բան ես սովորում, ասում եմ նախրի մեջ էշ ունեմ, ափսոս էն փողերը, որ քո վրա եմ ծախսում: Արի տունը նստի, ամեն օր Իսահակյանին կտեսնես: Էդ քո ասած գիրքն ի՞նչ արժե,– հարցրեց որդուն:

– Հայրի՛կ, հարցը գինը չէ, հարցը ազգասիրությունն է և ժողովրդին հարգանք պատիվ տալը:

– Ծո՛, – նորից տաքացած ասաց հայրը, – դեռ բրթած է կերել, ո՞վ է տեսել վեց շահնոց գիրքը տուն ու տեղ, ընտանիք պահե:

Իսահակյանը հանգիստ նստած հոր ու տղի միջև միջնորդի դեր էր կատարում, որոշեց հանգստացնել հորը ու նրա սրտով մի բան ասել.

– Պարո՛ն Մարտիրոս, մեր ջահելները փող աշխատելու ձևը չգիտեն, բայց կգա դրա ժամանակը: Չե՞ս լսել, մեր պապերն ասել են՝ աշխարհը կարդացողների երեսից պիտի փուլ գա:

– Օղորմի՛ պապիդ,– ասավ վաճառականը,– անջախ իմ սրտով մի բան ասացիր,– իսկ որդին գլուխը կախ ծիծաղում էր, որ հայրը չտեսնի:

Հենց այդ պահին վաճառականի գրասենյակի դռնով անցնում էին եվրոպական տարազով երկու ջահել տղամարդ: Մեծադիր շուշա վիստավքից նայեցին ու տեսնելով Իսահակյանին՝ ներս մտան, փաթաթվեցին իրար, քեֆ ու հալ հարցրին: Իսկ վաճառականը իր նստած տեղում իշացած նայում էր նրանց: Քիչ անց նրանք մնաս բարով արեցին ու առանց իր հետ խոսելու գնացին:

Աղեն հարցրեց.

– Էդ անծանոթ մարդիկ ովքե՞ր էին, վաճառականի չէին նման:

---

* Թիֆլիսում Իսահակյանի «Երգերն ու վերքեր»-ը լույս է տեսել 1908թ.:

– Մինը դամրչի լալ Մարգարի տղեն էր, Գեղամը, Գրիմբենց Պետրոս աղի փեսեն, Զավահիր խանումի ամուսինը, հավանական է քաղաքագլուխ ընտրեն, մյուսը Խալաթովենց Գրիգորն էր, Մոսկվայի համալսարանն է ավարտել, ուսումը պիտի շարունակի,– ասավ Ավոն:

Աղեն, դառնալով որդու կողմը, ասավ.

– Ծո՛, իշո՛ն գլուխ, տեսնու՞մ ես, ամեն մեկը մի կնյազ են դառել, դու Ավոյի գրքով ես տարված: Ավո, խնդրում եմ, վաղը մի քսան հատ գիրք բերես, կրկնապատիկ կվճարեմ...

Իսահակյանը ոչ հա ասաց, ոչ՝ չէ, մտքում զգաց, որ էս մարդը աշխարհից բեխաբար է, միայն իր գործի ու փողի մեջ է փորձված: Իսկ տղեն, թեև անհարմար զգաց, որ հայրը իրեն բանաստեղծի մուտ իշու գլուխ անվանեց, բայց հոր սիրտը չկոտրելու համար ասավ.

– Եթե ես էլ Մոսկվայի Լազարյան համալսարանում սովորեմ, նրանցից էլ կանցնեմ: Համոզված եղիր, որ էս տարի Ներսիսյան դպրոցը ոսկե մեդալով պիտի վերջացնեմ:

– Կհավատամ,– ասավ Իսահակյանը,– ազատ օրերիդ էլ դեռ հորդ գործերին ես օգնում: Ես հորդ կխնդրեմ, որ Ներսիսյան դպրոցն ավարտելուցդ հետո, քեզ ուղարկի Մոսկվա, ուսումդ շարունակելու:

– Ես էլ եմ այդպես մտածում: Դամրչու տղեն մարդ դառնա, քաղքի տեր դառնա, իսկ Ավոյենց Մարտիրոսի տղեն չոբա՞ն մնա,– վրա բերեց աղեն:

Իսահակյանն ուրախացած սեղմեց վաճառականի տղայի ձեռքը, ասելով.

– Ծո, գործդ լավ է գնում, հայրիկդ կակղեց, շնորհքը մնում է քեզ:

Իսկ տղան ուրախացած ասաց՝ կարդարացնեմ:

Մարտիրոս աղեն թևանցուկ Իսահակյանի հետ գրասենյակից դուրս ելավ, ասելով.

– Ողբմի՛ պապիդ, Ավո՛ ջան, ամեն բան հալիր լցրիր Ակոբիս ականջը:

– Միամի՛տ կաց, հիմա քեզնից է կախված,– ասաց Ավոն:

Իսկ Մարտիրոս աղեն խոստացավ, ասելով.

– Պետերբուրգ էլ, արտասահման էլ կուղարկեմ, ուժ ու դվաթ ունեմ, միայն վախենում եմ Նոյի ագռավի պես տուն չդառնա:

Կարծես թե ծերունու սիրտը վկայել էր, վերջում էդպես էլ եղավ:

ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԲԱՐԵՎԸ ՓՈԽԱՆՑՈՒՄ Է ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Երբ Իսահակյանը իր վրայից հանեց սևազգեստը, որ հագնում էին Գևորգյան ճեմարանի բոլոր ուսանողները, ուղևորվեց Վենետիկ, այցելեց

Սուրբ Ղազար կղզի: Նա փափագում էր տեսնել և տեսավ Հայր Ալիշանին, ծեր ալևորին, հայկազունյաց, Շիրակի, Արարատի մեծ հայրենասերին: Բաժանվելիս Ղևոնդ Ալիշանը Իսահակյանին պատվիրեց.

– Հայրիկին շատ բարև կտանիս: Նա հարյուր օր մեծ է ինձմե:

1901 թվին Իսահակյանը վերադարձավ հայրենիք և անձամբ գնաց Խրիմյան Հայրիկին տեսության, ինչպես և Հայր Ալիշանի բարևը փոխանցելու:

Խրիմյան Հայրիկը սիրով և ուրախությամբ ընդունեց բարևը և պատգամեց.

– Մասիս լեռան հողից, Երասխ գետի ջրից և մեր Արագած սարի ծաղիկներից մի ծանրոց (պասիլկա) պատրաստեք և նվեր ուղարկեք հայոց մեծ հայրենասեր իմ եղբորս՝ Ղևոնդ Ալիշանին:

ԳՈՒԹԱՆ ՍԱՐՔՈՂ ԳԵՎՈՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ

Քաղաքում մի շարք տեղեր ման գալուց հետո, Ավոն մտնում էր Միքայելյան փողոց, որտեղ վերից վար արհեստավորներ էին, մեծ մասը դամրչի (դարբին): Հենց այդ փողոցում, խանութ N 51-ում գտնվում էր նրա ընկերոջ, Չախմախչոնց գութան կապող ուստա Գևորի արհեստանոցը: Ուստա Գևորը, որ քաղաքում ճանաչված մարդ էր, ուներ նաև մականուն՝ Նազիկի կամ Թուլումբի Գևոր: (Էդ ո՞ր գյումրեցին է, որ մականուն չունի):

Դուրսը, Գևորի արհեստանոցի դռան վերևում խփված էր երկաթից շինված մի փոքր գութան, որը հաճախորդներին ասում էր՝ սա է գութան սարքող Գէորգ Յովակիմյան-Չախմախչյանցի արհեստանոցը, ի Ալեքսանդրապոլ:

Ահա որպես նմուշ մենք կարող ենք Գևորի պեչատած մի թղթի կտորը ցույց տալ, որի վրա իր արհեստանոցի գերբը և անուն ազգանունը կա, և որ գութանի այդ արհեստանոցը գոյություն է ունեցել 1880 թվականներից մինչև 1918 թիվը:

Բացի դամրչությունից Գևորը գիտեր կարդալ-գրել, նկարչություն և քանդակագործություն: Նա ուներ նկարած «Մայր Հայաստանը», «Վարդան Մամիկոնյանը» և քանդակած՝ «Էջմիածնի վանքը»: Նա հեռատես էր, հայրենասեր, հետաքրքրվում էր հայ ազատագրական պայքարով, Մերոբ փաշով, Արաբո-Անդրանիկով: Գևորը մեր ասնաֆի (արհեստակիցների) մեջ աչքի ընկնող դաշնակցական գործիչ էր: Կապ ուներ հայդուկային, ֆիդայական խմբերի հետ: Կարիքի դեպքում հանգանակություն էր անում արհեստավորներին, հայ խմբերում և թե տաճկահայ գաղթականությանը օգնելու համար:

Ուստա Գևորը հնչակյան կուսակցությանը սառն էր նայում: Ասում էր՝ երկու գազան միանգամից չես կարող որսալ: Մեզ այժմ պետք է մի

գազանին սպանել, որը Տաճկահայաստանում անխնա մեծ ու փոքրին, մեղավոր-անմեղին սրի է քաշում: Իսկ երկրորդ գազանը՝ միապետական ցարը, մեր կովկասյան, մանավանդ հայերիս ուժից վեր է... Մեր Ավոն, հավանական է, հենց դրա համար էլ տարվել է ուստա Գևորով, նա էլ Ավոյով:

Պետք է խոստովանել, այդպիսի շնորհքով մարդիկ Ալեքսանդրապոլում կային, օրինակ Ավոյի ընկեր Քուպալյան Ալեքսանը: Նրա թողած մի շարք գրքեր, թերթեր, ինչպես և «Ռուսկիյ պոմոշչ Արմենիի», 1914 թվին տպված, «Մշակ» թերթի 1872 թվի լրիվ տարվանը և մի շարք կարևոր հնություններ, Ալեքսան Քուպալյանի տղեն, իմ մոտ ընկեր Գուրգենը, նվիրել է իմ թանգարանին:

* * *

Ուստա Գևորը ծանրաքաշ մարմնի տեր մարդ էր, ուներ լայն թիկունք, ուժեղ ու հաստ բազուկներ, լայն ճակատ ու թավ հոնքեր: Ակնոցը միշտ աչքերին էին: Ինչքան որ ծանր երկաթ լիներ, մենակ կբարձրացներ, ոչ ոքի օգնության չէր կանչի: Հրամանատարի նման ամբողջ օրը զնդանի ու փուքսի առաջ կանգնած, կաշվե գոգնոցը կապած, երկու կիլոյանոց չաքուչը (մուրճը) մի ձեռքին, մյուսով, երկաթե մաշով (ունելի), շիկացած խոփը բռնած, թաք-թաք խփում էր, որ բանվորներն իմանան, թե իրենք կարմրած երկաթի որ տեղին պետք է զարկեն, խոփին ձև տալու համար:

Նրանց արհեստանոցում օտար մարդիկ չկային, կարելի է ասել տունուտեղով դամրչի էին, ինքը, իր եղբայր Մուկուչը, երկուսի որդիները՝ Կարոն, Սերգոն, Աղասին և մյուսները:

Մուրճերի հարվածների ձայնը, փուքսի փուք հա փուն, ածուխի ծուխը և ծեծվող երկաթի պեծերը թռչում էին օդի մեջ ու հանգում: Մի հետաքրքրվող լիներ, կասեր՝ սա գործ չէ, կատարյալ դժոխք է: Թե ուստի, թե բանվորների ճակատներից քրթինքը թափվում էր, իսկ թե կուրծք ու մեջքը ինչ էր լինում, մանավանդ տակի շապիկը... Բայց ոչ ոք տրտունջ չէր հանում, իրանց ամեն օրվա գործն էր, դրանով էին հաց վաստակում, տուն ու տեղ պահում:

* * *

Էդ օրն էլ Ավոն, դրսում իր գործերը վերջացնելուց հետո, եկել էր ուստա Գևորի արհեստանոցը, նստել իր սովորական աթոռին և ուշի ուշով հետևում էր աշխատանքին ու զարմանում էր, որ ոչ մեկը օֆ չի անում: Ավոն երբ տեսավ, որ պատրաստի խոփը արդեն թշշում-մշշում է զնդանի կողքը դրած տաշտի ջրում, Գևորին կանչեց հանգստանալու, ծխախոտ առաջարկեց և ասաց.

– Գևո՛ր, որ ճիշտն ասենք, ձեր գործը կրակ է, դժվար, մանավանդ սաղ օրը քուրայի առաջ:

– Ի՞նչ անենք, Ավո՛ ջան, մեր գործն էլ էս է և քեզ նման ընկերների հետ էլ, պատահած վախտում մեկ-մեկ օրի ենք խմում, էդ էլ մեր ուրախությունն է:

Ավոն իր սիրտը բացեց.

– Շուշա կտրողին էլ ուստա կասեն, քեզ էլ: Ոչ թե ուստա, այլ ավելի բարձր կոչում պետք է տան, դու փորձառու վարպետ ես:

– Է՜հ, Ավո՛ ջան, մինչև մուշտարիքս նոր անունս գիտենան, մենք սված կմնանք: Թող էդպես էլ մնա: Քսան տարվա ուստա եմ, մեր Գյումրվա շրջանի բոլոր գյուղերը ինձ գիտեն, մանավանդ գութանի տերերը: Ճիշտ է, ես կրկնապատիկ գին եմ վերցնում, բայց իմ սարքած խոփը ամբողջ սեզոնին դիմանում է:

– Գիտեմ, Գևո՛ր, մի քանի օր առաջ Ղազարապատում էի, գյուղում, մեր հարևանը ասաց.– Ավո, հալալ էղնի քո աղբեր տղա ուստա Գևորին, իր սարքած գութնի խոփը,եթե սուտ չասեմ, գալող տարվան էլ հերիք կանի: Գևոր, միայն թե իմ տեսակետով ուստա բառը քո անվանը հարմար չէ, որովհետև, մենք, հայերս, թուրքերի նման ճրագ ու ձագար շինողին էլ, շուշա կտրողին էլ, խոփ ու գութան սարքողին էլ նույն անունն ենք տալիս: Քո արածը մեծ շնորհքի բան է:

– Էհ, Ավո ջան, ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ման գութաս: Օսմանցի թուրքը հարյուր տարի է մեր քաղաքից գնացել է, դարձյալ ժողովուրդը սաբախտան-սաքսան-տոխսան ու շատ թուրքական խոսքեր է գործածում: Էդ բոլորը մեր ժողովրդի մթությունից է, ուսումից հեռու է փախչում, բավարարվում է երեսին խաչ հանելով ու հայի անուն կրելով: Մի քանի օր առաջ գնացի գրախանութ: «Կայծերի» երկրորդ հատորը առնելու, գրավաճառը սառը նայեց երեսիս, ասաց. «Աղբերս, էս գիրքը մի ամիս առաջ եմ ստացել ու մի հատ էլ չեմ ծախել, գոնե ձեռքդ խերով լինի»: Մարդը գրքի թոզը սրբեց դրեց դախլին:

– Այդ բոլորը ճիշտ է, Գևո՛ր ջան, համա զոռով բան չես կարող անել: Մեր հարուստները քար են դառել: Նրանք էլ, երբ իրենց տղոցը դրսում ուսումի են տալիս, ավարտելուց հետո մնում են էնտեղ: Շատերն էլ ասում են՝ գանք ի՞նչ անենք, Ալեքսանդրապոլի պասամաղներու՞ն (մայթերին) ենք կարոտ: Ահա թե ինչումն է մեր հայ ժողովրդի դժբախտությունը: Քչերն են, որ մտածում են իրենց ծննդավայրի մասին... Հա, մեկ-մեկ էլ լսում ես. տես է՜, երեկ չէ մեկել օրը գնացել են, «ա» ու «բ» սովորել, եկել են մեզ խրատ են տալիս:

– Հա՛, էդպես է,– ասաց ուստա Գևորը,– էն օրը մեկը թե՝ ղազարապատցի Իսահակյաններու տղեն գյուղից կուգա, կուտե, կիմե, իրա քեֆին ման կուգա:

– Շատ էլ ճիշտ են ասում,– սրտանց ծիծաղեց Ավոն,– եթե գյուղի տան օգնությունը չլինի, մեր ստացած մանեթներով ոչ տուն կարաս պահել, ոչ էլ հանգիստ պիսմեննուդ առաջ նստել: Գևոր, ի՞նչ ես կարծում, Թումանյանին, որ գյուղից չօգնեին, «Շունն ու կատուն» գրելով յոթ-ութ երեխա՞ կարար պահել, էն էլ Թիֆլիսի պես քաղաքում: Բայց արի ու տես, որ մեր գործը, բոլոր գրողներունը, մի պատուհաս է, որ մեր գլխում ու սրտում բուն է դրել, ոչ կարաս հրաժարվել, ոչ էլ կարաս փոխել: Էսպես տապակվելով, մաշվելով գերեզման պիտի իջնենք:

Էս խոսքերը դիպան ուստա Գևորի սրտին ու նա ասաց.

– Մի՛ հուսահատվիր, Ավո՛ ջան, քանի Իսակովենց օջախը կա, դու հանգիստ կնստիս պիսմեննուդ առաջ:

Էդ օրվա զրույցը երկարե՞ց ու վերջացավ էսպես...

Ո՞Վ Է ԲԱՆԱՍՏԵՂԾԻ «ՎԱՐՊԵՏ» ՄԱԿԱՆՎԱՆ ԿՆՔԱՀԱՅՐԸ

Ուստա Գևորը մի կարևոր բան մտքում դրածի նման, իր աթոռը ավելի մոտեցրեց Ավոյին ու դեմ առ դեմ նստած հայացքը գցեց Իսահակյանի երեսին:

– Ավո՛ ջան, վաղուց մտքումս մի բան կա, պիտի ասեմ, հիմիկվանից հարմար վախտ չկա, լավ է ասած՝ խոսքը խոսք կբանա: Մեր քաղաքի արհեստավորները, թե ջահել, թե տարիքով, ինձ տեսնելիս կասեն՝ Գևոր, յարանիդ* որ կտեսնինք, ճամփեքս կծռենք, իրա երգերը կերգենք, հրմը չիդենք թե էդ մարդուն ինչ անուն տանք, քեֆ ու հալ հարցնենք: Իսահակյան ասե՞նք, մեզ սազ չի գա, մենք անգրագետ մարդիկ ենք, աղա ու պարոնից էլ մի վերստ հեռու կփախնինք... Արի խոսքիս համոզվի, ամեն մի հայ գրող իր կեղծ մականունն ունի, ինչքա՞ն վատ անուն է Հանճար կամ Վարպետ: Երբ դու մարդկանց սրտի ու հոգու վարպետն ես...

Եվ ուստա Գևորը, ձեռքերը կրծքին ծալած, Ավոյին էր նայում ու պատասխանի սպասում:

Ավոն, իր սովորական ձևով քիչ պահ գլուխը կախ արավ ձեռաց վրա, որ բռնած ուներ իր հաստ ու կլոր, փայլուն ձեռնափայտը, որը շատ անգամ Մովսես մարգարեի գավազանի նման, որ կտրեց Կարմիր ծովը և հրեաների համար ճամփա բաց արավ, նույնպես և Իսահակյանի ձեռնափայտը նույն դերն էր տանում հայոց զուլում աշխարհն անցնելու: Ավոն, հանկարծ գլուխը բարձրացրեց ու տեսավ, որ Գևորը դեռ սպասողական իրեն է նայում, ասաց՝ ոչ հպարտությամբ այլ սովորական, ժպիտով.

---

* Յարան - ամենամոտ ընկեր:

– Գևո՛ր ջան, Հանճար անունն ինձ հարկավոր չէ, երբ դու Վարպետ անունը ինձ հարմար ես գտնում, ես հոժար եմ Գյումրի-Ալեքսանդրապոլի ժողովրդի սրտի ու հոգու վարպետը լինեմ: Թող այսուհետև ոչ մեկը ճամփեն չծռե, այլ դեմ առ դեմ, դուզբեդուզ դեմս ելնի ու Վարպետ ասե, ես իմ անունիս տերն եմ:

– Վա՜յ, քու մեծ հոգուդ մեռնիմ, Վարպետ ջան,– ասաց Գևորը, և երկուսով գրկախառնվեցին, մինը իր սև ու մրոտ ձեռքերով, որ գութան էր շինում հայրենի Շիրակի հողը հերկելու համար, մյուսը փափուկ ու սպիտակ ձեռքերով, որ գրիչը բռնած գրում էր Արագածի ու Շիրակի երգերը:

– Ծո, Մուկո՛ւչ,– փոքր աղբորը դարձավ Գևորը,– հիմիկվանից լավը չկա, գործը թողեք, տղեք, մեր տուն գնացեք, փռից չանախ բերեք, կախեթու ալազան գինին հանեք մառանից, մեր ասնաֆի (արհեստակից) մարդկանց ու հարևաններին կանչեք: Քեֆ ենք անելու, ոչ սովորական քեֆի պես,– ու դառնալով Ավոյին ասավ,– Ավո, լավ գիտեմ, որ մեր քաղաքի հասարակությունը, դարաչուխալիք անգամ, մեր ամբողջ արհեստավորներն ու համքարները սրբի պես պիտի պաշտեն քեզ ոնց որ մի մատուռի:

* * *

Դժվարն էն է, որ մեկը իմացավ, ողջ քաղաքը, մեկը մեկին ասելով-խոսելով, Վարպետ մականունը տարածվեց՝ նվագող, միկիտանչի, ֆայտոնչի, բանվոր, աշկերտ, արհեստավոր, դպրոցի ուսուցիչ ու աշակերտ, վաճառական ու խանութպան, ծեր ու մանուկ իրարու ցույցի էին տալիս ու ասում՝ Վարպետն է գալիս, դազարապատցի Ավոն:

...Իսկ որպես Իսահակյան մնաց գրականության ու գրական գործիչներու շրջանում:

* * *

Այս տողերը գրողս կարիք չեմ զգացել հպարտանալու ոնց որ շատերը, թե Իսահակյանի կենսագրությունը լավ գիտեմ ու նրա հետ ընկեր եմ եղել: Էդ թվերին ոչ Երևանը, ոչ Ղարաքիլիսեն ու Լոռին, ոչ Ղազախը կամ Ախալցխան ու Ախալքալակը, կամ Ղարսը երբեք Ավոյով չէին հետաքրքրվում: Նրան Ալեքսանդրապոլի արհեստավորները բարձրացրին և որին, որպես երախտիք, Ավոն Պոլոզ Մուկուչի գերեզմանի վրա քար գցել տվեց:

Այս փոքր բանը, որ ձեզ պատմեցի՝ դամբչի Գևորին մինչև իր մահը լավ ծանոթ եմ եղել: Տեսել եմ նրա նկարներն ու քանդակը, նույնպես նրա եղբորը, Մուկուչին և իրենց տղաներին: Կարոն, որսի գնալիս, անզգուշությունից հրացանը տրաքվեց ու շեշմաները մտան գլուխը,

ահացավ: Աղասին ինքնասպանություն գործեց, իսկ երրորդն իր մահով գնաց: Ուստա Գևորը իմ հոր, Արշակի, մորքուրի տղան է, Նազիկ տատի առաջնեկը, դրա համար էլ Նազիկի Գևոր էին ասում: Հայրս, ուստա Գևորը և հորս հորեղբոր տղա Խաչոն ջահել ժամանակ իրար հետ կարվել են և էդ նկարը ներկայումս իմ թանգարանում է, կախված է Գյումրի-Ալեքսանդրապոլցիների պատվավոր քաղաքացիների նկարներու հետ: Ես դպրոցի տղա էի, որ այդ ամենը ուստա Գևորը կպատմեր իր դասակակից մարդկանց, իսկ ես ականջ կդնեի:

1918 թվին Գյումրվա ժողովուրդը, թուրքերի գալու ժամանակ ամեն մեկը աշնան տերևի նման ցրիվ եղան: Էլ ու՞մ դարդն էր, թե Ավոն, Լարպետը, ի՞նչ եղավ կամ արտասահման գնաց:

Սա որ գրել եմ, ոչ թե էսօրվա համար: Ոչ, սա գրել եմ որպես դասասեր իմ Գյումրի-Ալեքսանդրապոլ երկրորդ հատորի մեջ ոչ թե միայն Ավոյի, այլ ողջ Գյումրիի մասին, մինչև 1920թ.:

Վերջ:

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նրան Ջումշուդ քեռի էի ասում: Երբ խմբագրություն էր գալիս, բուցում էինք դեսից-դենից, իրեն մտահոգող խնդիրներից: Նրա համար ս դարձել էի մի հարազատ մարդ, ում կարող էր վստահել իրեն հուզող ոլոր խնդիրները: (Քանի՜-քանի՜ այդպիսի անմնացորդ նվիրված արեկամ եմ ձեռք բերել իմ երկարամյա լրագրողական աշխատանքի նթացքում):

1977 թվականի մարտին, կինը, Մանուշակը, Լենինականից զանգեց հայտնեց, որ Ջումշուդը ծանր հիվանդ է և կանչում է ինձ: Գնացի մարտի 7-ին: Լա՛վ էր, որ գնացի, քանի որ նա անհամբեր սպասում էր ինձ ասելու այն ամենը, ինչ մեր ծանոթության տարիներին հանդիպումների ու ամակների միջոցով (որոնք բազմաթիվ էին) գուցեև ասել էր, բայց ավարար չէր համարում:

Ինձ դիմավորեց Մանուշակ մայրիկը: Աչքերը տխուր էին, շատ ծանր ասաց: Տեսնենք կարողանալու՞ է խոսել:

– Ջումշուդ քեռի, ես եմ, Մարգոն, եկել եմ քեզ տեսության, շուտով առողջանալու ես, նորից «Գարունի» խմբագրություն ես գալու...

Չպատասխանեց: Ձեռքով ցույց տվեց մահճակալի կողքի աթոռը: Ժվարությամբ սկսեց խոսել: Աչքերը կիսախուփ, ծանր շնչելով: Ինձ վաց, թե նա վերջին պատգամն է տալու, չգիտեմ, ճի՞շտ արեցի, հանեցի դաղիրս... Ես գրի առա նրա հատուկտոր խոսքը, որ մահվան մահճում ռնվողի խոսք էր՝ իր անցած դժվար ճանապարհը մեկ անգամ էլ իրրև դազ վերապրելու:

* * *

Նրա առաջին միտքը՝ նկարիս տակը գրել եմ, որ երկրորդ դասարանի կրթություն ունիմ: Թող իմանան, որ անգրագետ մարդն էլ ուսում կսիրի: Թող մի գյուղում իմանան, մի հետամնաց գյուղում, որ աշխարհում այսպիսի մարդ է եղել:

Իմ մահից հետո կգաս, Գուգարքին նվիրված երկու հատորները կկարդաս: Հայ որբերի մասին եմ գրել, ինչ-որ տեսել եմ:

Երեկ չէ առաջին օրը վերջին կոպեկս տվել եմ Սողոմոն Թեհլերյանի նկարն եմ մեծացնել տվել: Թալեաթին սպանողն է:

Անխոնջ մշակ եմ եղել հայ ժողովրդին և ուրախ եմ: (Ձայնը մարում է: Լռում է):

Ռուսական նկարների մասին չմտածես: Քանի կմոտենա՝ կանուշնա: (Խոսքը Հայաստանը Ռուսաստանին միավորելու 150-ամյակի առթիվ կազմած երկու հսկայական ալբոմներն էին, բազմաթիվ նկարներով):

Ես բախտավոր եմ, որ մի երկու հատ գուսանական բան եմ թողել:

Լոռին չմոռանաս: Դաշնակների ժամանակ ինձ ուղարկել էին Լոռի աշխատանքի: Որբեր, որբեր... Աթան, Ահնիձոր, ովքե՞ր են եղել, ի՞նչ են արել, ո՞վ է հարուստ...

Ճամփով անծանոթ մարդը որ անցավ, անպայման պետք է բարև տան: Լոռեցիք սովորություն ունեին ղոնաղի ոտ լվալու: Լոռեցին սարի գլուխը կբարձրանար, կբղավեր.

– Արա՜, հե՜յ...

Ջամանլուի կամրջի գրավմանն եմ մասնակցել:

Ջորագետցի Էրեգրոն, կեղծանունը՝ Բոլշևիկ:

Առաջին անգամ Թիֆլիսում Անդրանիկին տեսա 1914 թվին, Քեռուն, Համազասպին: Օ՜ֆ... (Ձայնը մարում է):

Անդրանիկը ծխախոտի համար ժամանակ չէր կորցնում: Սասունից որ եկավ, գնաց Պարսկաստան, Եփրեմ խանի մոտ...

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔՍ.

Թող սահեն դարեր և ազգեր նույնպես,
Իմ սառ շիրիմում դարձյալ հայ եմ ես:

Ջումշուդ:

Իմ հոգին իմ հայրենասիրությունն է: Ես փոշման չեմ: Միայն մի բանի համար եմ փոշման, որ անգրագետ եմ:

Մանուշակիս մի մոռանա: Իմ կինս, ինձ փայփայող Մանուշակն է: Գիտե՞ս, այս հազարավոր նկարները, որ հավաքել եմ, Մանուշակը քիչ նեղություն չի քաշել, աշխատածս ամբողջ փողը դրանց եմ տվել:

Հայաստանին վառելանյութով բավարարել եմ, փայտ, ածուխ... Սաղախլվից Փոթի, Սոչի, Տղվեբուլի, Բախմարո-Վրաստանի ամենաբարձր սարն է, էնտեղ բիլամ էղել եմ: Քառասուն տարի թափառական կյանք եմ վարել:

– Հայը չպիտի մուրա,– տնքալով ասաց Ջումշուդը:

– Թո՛ղ, ես կպատմեմ,– ասաց կինը՝ Մանուշակը:

Թիֆլիսի երկաթուղային կայարանի ռեստորանում մի հայ կին է մտնում, երեխայի ձեռքից բռնած: Աշխատողներն ուզում են դուրս անել: Ջումշուդը բերում է իր սեղանի մոտ, պարկը հացով լցնում, փող տալիս...

– Հայը չպետք է մուրա, – դժվարությամբ եզրափակեց հիվանդը: – Քառասուն տարի թափառական կյանք եմ վարել:

Ես աթոռս ավելի եմ մոտեցնում: Ձայնը հաճախ կորչում է:

Ընկերներս թուրքի բեկի կողմից շրջապատված էին: Մենք, տասը ընկերներով մաուզերներս քաշեցինք... Ես խփեցի հրամանատարի ձին, հրամանատարն ընկավ... Աշիկը, Քեռու ձիավորի օգնականը... Դիարբեքիրի Այգի շեյխի տղան 500 ձիավորով եկել էր թուրք Սմքոյին օգնության:

Պարսկաստանից սկսած մինչև էսօր... Ջումշուդ, Ջումշուդ, օ՜ֆ...

Ախթալա, Սանահին... Քոքերում երկաթուղու կռուշենի շատ է եղել, ինձ բան չի եղել: Բաքվի կողմը դեմս դաչաղ ելավ: Թելավում-Վրաստանում դաչաղների ձեռից մի կերպ պրծա... Քյաշկա էն վախտը մեռնեի... Երգելու նման

Ես քեզի մատաղ
Որ միտս ես գալիս՝ ասում եմ ա՜խ,
Կվախեմ գուցե կարոտով մեռնեմ,
Մուրք ազատությունդ գուցե չտեսնեմ:

1914 թվին, իմ փողով, երկու հարյուր ռուբլի, գիրքս 500 օրինակ տպել տվի: Երեք ամսվա մեջ 3000 ռուբլի կաշխատեի, բոլորը ծախսել եմ թանգարանիս վրա: 1914 թվին, որ գնացի կամավոր, ես ունեի ընանաստեղծություն՝ «Հայրենիքի սեր», գրքիս մեջ է:

Ինձ մարդկանցից հեռու էի պահում: Ինչպես մի կոշկակար, որ դրախանութում աշխատի: Ձեռքս փող կար, պատիվ-շնորհք կար, բայց չէի սիրվում, անզրագետ էի: Էդ էլ իմ ցավս է:

Իմ ձեռքով գրված դավթարները՝ «Անդրանիկ», երեք հատոր, «Հայ թիդայիներ» չորս հատոր, «Գյումրի-Ալեքսանդրապոլ» երկու հատոր, «Ղարս», երկու հատոր, «Իմ կյանքի պատմությունը», երկու հատոր, «Իմ

աշխատանքը», մեկ հատոր, «Գուգարք», երկու հատոր, «1914թ. հայ որքեր», մեկ հատոր, նայած թե ով պետք է կարդա, «Նամակներ»՝ մեկ, «Աստվածաշունչ. Լենինի կյանքը»՝ մեկ, «Ռուսական գրքեր», չորս հատոր:

Ես անգրագետ, էս հասարակ մարդը Լենինգրադի էրմիտաժը ո՞նց է բերել էստեղ...

Վրես թող Լենինականի սև անտաշ քար քաշեն՝ թող սահեն դարեր... Ծիծաղող էլ կլինի, լացող էլ կլինի, հիմա մարդկանց չես կարող զարմացնել ոչ փողով, ոչ հագուկապով...

Թելավում փողոցով անցնում էի, լսեցի «Մայր Արաքսի ափերով» երգը: Էս ի՞նչ բան է, ասեցի, էս վո՞վ է: Հարցուփորձ արեցի՝ հա, էստեղ մի լավ աղջիկ կա, էն է երգողը: Էդ էլ սիրուն Մանուշակն էր, 18 տարեկան, ես 31 տարեկան, ամուսնացանք:

(Սա նրա կյանքի ամենավերջին հուշն էր, որ երազի պես սահեց փակ աչքերի տակով):

* * *

Ծանր սրտով հասա Երևան: 1977 թվի մայիսի 5-ին գնացի ճամփորդության՝ Ֆինլանդիա-Շվեդիա: Երկու շաբաթ անց վերադարձա: Հեռագիրը, որ գուժում էր Ջումշուդ Պետրոսյանի մահը, ստացվել էր տասն օր առաջ: Ես հիշեցի նրա տողերը թոշակի վերաբերյալ.

Քառասուն տարվա աշխատանքս արին հեչ,
Կարա՞ս փող, կեղծ տեղեկանք բերես մեզ,
Ծերությունն էլ մեր հաշվի մեջ չէ,
Քեզ ո՞վ ասավ, թե թանգարան կառուցե...

* * *

Եվ ահա անցել են երեսուն և ավելի տարիներ...

Հրապարակումը՝ *Մարգո Ղուկասյանի*